ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ -3-Ե- 1187

« 15 » փետրվարի 2022թ.

«ՄԱՅ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Դ.ԴԻԼԱՆՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար տպագրական և առաքման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-22/02» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում՝ «Մայ Պրինտ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ մասնակից) կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները.

ա) ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունում (Հավելված N 1) վերջին նախադասությունը ավելորդ է, ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին: Միաժամանակ հրավերի ՄԱՍ I-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի «ե)» պարբերության համաձայն՝ դիմում հայտարարության 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը ենթակա չէ լրացման.

բ) ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.2) (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

- հրավերին կից ներկայացված՝ հայտարարագրի լրացման կարգի (այսուհետ՝ Կարգ) 1-ին կետի 2)-րդ ենթակետով սահմանված է, որ «Հայտարարագիրը ներկայացնող անձը» ենթաբաժնում լրացվում է այն ֆիզիկական անձի տվյալները ով ստորագրում է սույն ընթացակարգի հայտում ներառվող փաստաթղթերը: Մասնակցի հայտով ներկայացված է լիազորագիր, որի հիմքով հայտում ներառված փաստաթղթերը ստորագրված են լիազորված անձի կողմից, սակայն Հայտարարագրի «1.2. Հայտարարագիրը ներկայացնող անձը» ենթաբաժնի համապատասխան դաշտերում լրացված են ոչ թե լիազորված անձի, այլ ընկերության տնօրենի տվյալները, ինչը չի համապատասխանում Կարգի նշված ենթակետի պահանջներին.
- Կարգի 2-րդ կետի 3)-րդ ենթակետով սահմանված է, որ «Վերահսկողության մակարդակը» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագրի 2.1-ին ենթաբաժնում լրացվել են Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձին վերաբերող տվյալները: Մասնակցի հայտով ներկայացված հայտարարագրի «2.3. Վերահսկողության մակարդակը» ենթաբաժնի «2.3.2. Մասնակցության տեսակը» դաշտում կատարված է նշում, այն դեպքում, երբ Հայտարարագրի 2.1. ենթաբաժինը լրացված չէ.
- Հայտարարագրի՝ «4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժնի «4.5.1. Մասնակցության չափը (%)» և «4.5.2. Մասնակցության տեսակը» դաշտերում կատարված են համապատասխան նշումներ, սակայն «ա.» կետում որևէ նշում կատարված չէ.
- լրացված չեն Հայտարարագրի «4.7. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնի «4.7.1. Իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին» և «4.7.2. Կազմակերպության նկատմամբ վերահսկողության իրականացումը» դաշտերը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-22/02» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11-րդ կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **փետրվարի 16-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում Ձեր հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-22/02» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788